

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**8 դեկտեմբերի 2021թ.  
ք.Երևան**

**N 252-Ա**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի  
ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՎԱԾ «ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ»  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆԻՑ  
ՀԵՏՈ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Վերակազմյալ սոցիալ-դեմոկրատ հնչակյան» կուսակցության լիազոր ներկայացուցիչ Դավիթ Չոիրաբյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Թույլատրել «Վերակազմյալ սոցիալ-դեմոկրատ հնչակյան» կուսակցությանը «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված նախընտրական հիմնադրամի միջոցներից վճարում կատարել մինչև քվեարկության նախորդ օրը կատարված գործարքների համար՝ 54 000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամի չափով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ**